

ԱՐԾՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՈՒՅՑԱԿԱՆ ԵՒ ՈՒՅՏԱԿԱՆ ՆԿԱՏԱՂԱՌԹԻՒՆՆԵՐ
(ԵՐԿՐՈՐԴ ԵՅՑ, ՅՈՒԼԻՍ 1931)

ԱՐԾՆԻ ջերմուկը գտնուում է Հրազդան (Չանգու) գետափի, Երեւանից ընդամենը 24 հազարամետր հեռավորութեամբ, որ այսօր դարձել է մեծ ուխտատեղի Հայաստանի աշխատաւորութեան համար, ուր ամէն տարի Մայիս-Հոկտեմբեր այցելում են հարիւրաւոր յոգնած բանւորներ՝ վերականգնելու իրենց քայքայուած իրանը: Ես էլ, յիսուն տարւան վաստակածս միացայ այդ խմբին եւ սոյն Յուլիսի սկզբներին ուղղեցայ դէպ ի ջերմուկը լայնացած եւ կարծրացած սրտի մկաններով, դողդոջուն ծնկներով Անահտական ջրերով բուժւելու, օգտւելու բնութեան անսահման բարիքներից: Եւ իսկապէս կազդուրւեցի:

Հրազդան վտակը որոտընդոստ եւ ահեղագոյ սահանքով իջնում է հիւսիս-արեւելքից Սեւանի լճակից եւ հիւսիս-արեւմուտքից Մայմեխ լեռներից, որոնք միանալով Մաման տաճարի տակ Ուռնդամալի (Գեղազանձ) գեղում՝ սարազաշտում, օծապտոյտ ընթացքով հոսում են հարաւ եւ ապա մտնում մի խոր ձոր, ուր ջուրը փորել է միլիոնաւոր դարերի ընթացքում 100 մետրից աւելի խորութեամբ եւ 50 հազարամետր երկարութեամբ մինչեւ Երեւան եւ Արարատեան դաշտ: Այս անբաժանելի եռանկյունաձեւ ձորում, որի թաղաթիւն կարծր կողերը ցոյց են տալիս, որ անմահական եւ կենսատու ջրերը իրենց հզօր զօրութեամբ անգէտ մարդուն ստիպել են երկրպագել այդ անյաղթ ոյժին: Չորի թաղաթիւնայ քաջաքար կողերը իրենց վիթխարի եւ սիւնաձեւ շարքերով, 20-30 մետր ուղղաձիգ բարձրութիւններով վկայում են, որ հազարաւոր դարերում աննւաճ ջրերը ջարդել, փշրել, աւազացրել քշել տարել են կասալից ծովը այդ ժայռերը ահաբեկելով եւ սոսկացնելով բնա-

կիչներին, որոնք ընկճւած խոնարհւել եւ երկրպագել են ամենահզօր ջրին, որ յաղթահարել է իր ընթացքը խափանողներին:

Եւ ինչպէս չխոնարհէին այն ջրերին, այն բիւրաւոր աղբիւրներին, որոնք բխում են վտակների ափերում եւ առաջացնում են այնպիսի դալարիք, ծառ ու ծաղիկ, որ յուսաբեկի սրտում հրճանք, դէմքին ժպիտ, շրթունքներին ծիծաղ եւ երգ են առաջացնում: Զարթ դէմքով սարազաշտից իջնում է ուխտաւորը ձորի գոտի վայրը, մտնում է ծառաստանները դալարը կոխրճելով: Հեռուն երեւում են կարմիր կտուրների տակ բուժարանը, բաղնիսը, մեքենատունը իր բարձր աշտարակով, վանանների տունը, դարմանոցը, լուացքատունը, սպասաւորների եւ այգեպանի բնակարանը: Քիչ հեռուն նորաշէն հիւրանոցը, հանրակացարանը, վարչականների օթեւանը, բանջարանոցները, գոմերը, ելեքտրակայանի աշտարակը, Արծնջրի գործարանը, որոնք բոլորն էլ կազմակերպւել են աշխատաւորի կեանքը բարելաւելու համար առողջապահ գործավարութեան ջանքերով վերջին 5-6 տարիներու ընթացքում եւ շարունակուում են:

Երբ մտնում էք բուժարան եւ հանրակացարան, ծանօթանում էք հարիւրաւոր ջերմուկաւորների հետ, այնպէս զմայլում էք հոգեպէս, յափշտակւում էք, զգում էք թէ ինչ զանազանութիւն կայ աշխատաւորի հիմնած պետական հիմնարկութեան եւ նախկին կայսերական ձեռնարկութիւնների մէջ: Այստեղ ամէն ինչ արտադրողների բարելաւութեան, այնտեղ միջակորեարի մենաշնորհին համար:

Դեռ 1828 թ. երբ Պասկեւիչը նւաճեց Երեւանը, քննել տեղ եւ իմացաւ թէ ինչ բուժիչ յատկութիւն ունին Արծնու աղաջրի աղբիւրները. բայց մի դարի ընթացքում ցարական կայսրութիւնը հարիւր կողմից չձախտեց, չյարմարեցրեց որ բնականութիւնը օգտուի. իսկ աշխատաւոր վարիչները 1925-1931 թ. միլիոններ

ծախսեցին եւ հաստատեցին այս բուժարանը, որ օգտւին արտադրողները: Դեռ սրանով բաւական չէին, ծրագրւած է այս տարի բուժարանի շէնքը կրկնակի մեծացնել, որպէս զի առաջիկայ տարին ամէն ամիս 200 քայքայուածներ ուղղւին այնտեղ բուժւելու կրկնակի թւով: Առաջիկայ հինգ տարւան համար ծրագրւած է Արծնի գեղի բարձունքում մի ընդարձակ բուժարան շինել, ֆունկիոնարով միացնել վանանների հետ, որպէս զի աւելի զով օգի մէջ ապրին ջերմուկաւորները:

Այս բոլորը կատարւում է ո՛չ թէ այցելուներուն շահագործելու, այլ աշխատաւորների կենցաղը բարւոքելու համար: Զերմուկից օգտւում են 60° թով բանւորները եւ 40° թով պաշտօնեաներ, ծառայողներ, ուսուցիչներ եւ այլ մասնագէտներ: 1925 թ. Արծնու բուժարանից օգտւել են 63 հիւանդներ, 1926 թուին 408, 1927 ին՝ 617, 1928 ին՝ 592, 1929 ին՝ 681, 1930 ին՝ 929: Զերմուկը այս հիւանդներին փրկել է, որին հնումը հրաշքներ են վերագրել: Այստեղից սրտի խորշերի լայնացմամբ եւ մկանների կարծրացմամբ տանջւողները լիովին գոհացած արամադրութեամբ են հեռացել, ստամոքսի եւ աղիքային ցաւերով տառապողները հրճանքով են մեկնել, յաջորդ տարին վերստին այցելելու ծրագրով, յողացաւով կծկթաճները՝ ուղղաձիգ եւ սրնթաց քայլերով են բարձրացել զառիվերի ուղին, իսկ ջերմային եւ ջղային հիւանդները ապաքինւած տուն են վերադարձել:

Զերմուկի ջրերի այս ուժն է, որ երկրի բնակիչները դարերով պաշտել են երկրից բխած ամէն աղն ու աղբիւրը, գերագոյն զօրութեան — Անահիտի յայտնուրեան սրբալայր են համարել եւ երկրպագել ու պաշտել: Հրազդանի ձորը, Արծնու աղբիւրից վեր եւ վար, Նուրնուսից մինչեւ Պաղնիս գիւղերը եօթը հազարամետր երկարութեամբ վարդի թփերով են զարդարել Անահիտի պաշտողները, որ թէեւ տասը դարուց ի վեր անխնամ են թողուած, բայց մինչեւ այսօր շարունակ

պահպանել են իրենց գոյութիւնը, որպէս զի ուխտաւորները փունջեր կազմեն, վարդաջուր սրսկեն իրարու վրայ եւ յիշեցրեն Վարդամօր Անահիտին: Ո՛չ միայն Արծնու այս ձորումն են պաշտել ջուրը, այլ Մամանից, Մոխրավանքից, Բջնից մինչեւ Օձուն գիւղերն իրենց աւերակ եւ կանգուն հնութիւններով վկայում են, որ նախաքարային շրջաններից Վիշապ — Անահիտը պաշտւել է Հրազդանի ափերում, նրա առասպելները, նախապաշարութիւնները պահպանւել են մինչեւ քսաներորդ դար:

Շատ խորհրդաւոր հմութեամբ հին աշխարհը մեր երկիրն անւանել է ԳԵՏՏԵՐԻ երկիր, Սումմեր Ակկադները Ուրի (ջրերի) երկիր են թարգմանել, իսկ սրանց յաջորդող Սեմականները՝ Նայիրի երկիր: Եօթը մեծ գետերը — Եփրատ, Տիգրիս, Երասխ, Կուր, Ճորոխ, Իրիս եւ Ալիւս իրենց հարիւրաւոր վտակներով, հազարաւոր առակներով, բիւրաւոր լճակներով եւ միլիոնաւոր աղբիւրներով ո՛չ միայն ոռոգել, ողողել, կենդանացրել եւ աճեցրել են Հայկական աշխարհի 16 նահանգները, այլ կենդանացրել են Միտանիայի, Ասորեստանի, Միջագետքի, Սանաարի անապատները մինչեւ Պարսկական ծոցը: Հայերը չեն եղել իրենց ծննդավայրը Գրախտ եւ Աստու բնակարան յայտարարողները, այլ հնագէտները ապացուցել են, որ մեր թւագրութիւնից էլ 70 դար առաջ Սումմեր Ակկադները պաշտել են Պրադ եւ Շադ գետերը, որոնցից գոյացել, ոռոգւել, ունձացել էր իրենց երկիրը, եւ այդ գետերի ջրային գերագոյն զօրութիւնների բխած ծննդավայրը համարել էին դրախտ (ծառաստան, բուրաստան, մրգաստան եւ բանջարաստան): Սրանց հետեւելով Երեմիա եւ Եզեկիէլ մարգարէներն էլ Գրախտի սահմանները ուրազձեւ էին Գետերի երկիրը, որոնցից եւս ընդօրինակել են հայ վարդապետները քրիստոնէութիւնը հաստատելու եւ ամրացնելու համար:

Գետերը ո՛չ միայն ոռոգել ու բեղմնաւորել էին Միջագետքը, այլ Ակկադեան բարձունքից դէպ ի հարաւ սահած սառը

քամիները այնպիսի հաճոյալի զովութիւն էին պատճառել, որ դաժան տապ աշխարհի բնիկների երեւակայութեան մէջ «Գերագոյնի հզօր զօրութիւնները» մէկն էլ այդ դուրեկան հովերն էին թւացել և համոզել թէ գերագոյն երրորդութեան երրորդ դէմքը — աշխարհի կեցուցիչն ու փրկիչը՝ Անահիտը՝ հաստատուած էր Նախիրի երկրում:

Հայաստանը իր բուր ու բորանով, սառնամանիքով և սառուցային դաշտերով դրախտի էին փոխարկւել և երանել Սումմեր Ակկադներից և նրանց յաջորդող Աեմականներից, որոնց դատողութեամբ ամէն մի աղբիւրի ջրերով Անահիտը կեանքն էր քաղցրացրել, մարդկութիւնը բախտաւորել և ցաւազարններին իր շատրւանների տաք ու սառը ջրերով փրկել: Այդպէս էր երեւակայում անգարգացած կարճամիտ բնակչութիւնը, թէ ջերմութեան բուժող ջրերը Անահիտի շնորհներն էին, որոնք բաշխուած էին իրեն վայելքին:

Ինչպէս Գետերի երկրի բոլոր ջերմութիւնները, նոյնպէս Արծնու աւազանը նախաքարային դարում պարսպել է բոլորակ ցանկապատով, աչկատարեան (cyclop) պարսպով մեծամեծ ժայռի բեկորներով: Այս դիրքով էլ մնացել էր մինչեւ 1925 թուականը, որու լուսանկարը կախուած է դարմանոցի դահլիճում՝ լողացողների խումբանկարով: Ինչպէս Օլթիի փենեկներով Արդուսի ջերմութիւնը, Բասէնի, Հասան-կալայի, Կարնոյ Իլիջէի, Մեղրագետի ալունքի (Ներքովդայ ստորոտում) եւն. բոլոր ջերմութիւնները բոլորակ աչկատարեան հիմունք ունին, այդպէս էլ համանման ձեւ է ունեցել Արծնին, որ յիշեցնում է ջրապաշտութեան շրջանի կառուցւածքները ամբողջ Նայիրի երկրում և գաւառներում: Որպէս զի անասուններն ու գաւառները աղբիւրակը չպղտորեն, չապական են ջերմութեան աւազանները՝ վիթխարի եօթն ապառաժներով շրջապատել են և լողալու յարմարեցրել:

Ջերմութեան ցանկապատներից առաջացել են բոլորակ տաճարների և բազ-

նիսների ճարտարապետութիւնը: Գետերի երկրի բնիկները, որպէս Արիացիներ չէին կարող համարձակւել Ահուրամազդային մոցնել որ և է շինութեան մէջ, նա սրբութեամբ էր արեւի ճառագայթների նման համայն տիեզերքում եւ պաշտում էր Արշալոյսի արեւագալի բարձունքների կատարներին: Զուրը Ահուրամազդայի Միածին գաւաղը իր յայտնաբերած աղբերակում մաքուր պահելու, խմելու և լողանալու համար, յստակ պահելու դիտմամբ շրջապատել են որմերով, որին զարգացած դարերում սրբատաշ քարի որմեր են աւելացրել և վերջապէս վեղարով ծածկել Ուրդական և Պարթեական շրջաններում:

Ինչպէս նկատելի է մեր պատմագիրների գրածներից, գետերը և լճակները կազմել են Նայիրի երկրի սրբազան պաշտամունքները, ամբողջ երկրի հին աւերակները մինչեւ այսօր պահպանել են ջրապաշտութեան հետքերը: Վիշապազուն բուրմերը ջրապաներն են եղել, ջրի սպասուոր, որոնք աշխատաւորներին առաջնորդել են ջրանցքներ շինելու կամ վերանորոգելու, կարկատելու: Անանիա Շիրակացին գրում է թէ՛ Վիշապն Անահիտն է. հետեւաբար Գետերի երկրի կեանքն ու կեցուցիչը ինքը Անահիտն է, ջուրն է: Այս են հաստատում կենդանի աւանդուածները մինչեւ այսօր: Ջերմութեան կազդուրել, բուժել են բանւոր-հողագործի իրանը — մարմինը: Զուրը համարել է ամէն ցաւի դեղն ու դարմանը: Կնէյալի ջրաբուժումը գործադրւել է նախաքարային շրջանում Նայիրի ամէն մի դաշտում և ձորում: Ջերմութեան բուժիչ յատկութիւնը վերագրել են Անահիտի գերագոյն զօրութեան և ոչ թէ ջրերի և սրանց բուժանգաւաճ աղբիւր յատկութեան:

Բանւորա-գիւղացիական կառավարութիւնը աշխատաւորութեան առողջապահութեան և բարեկեցիկ կեանքի զարգացման նպատակով համար, ինչպէս Ռուսաստանում, Սիբիրում, Թուրքեստանում կաշտրոյները կարգի դրեց. նոյնը կատար-

ւեց և Կովկասում: Ինչպէս միլիոններ չի խնայեցին ջրանցքների վրայ, որպէս զի երկրամշակութիւնը զարգացնեն և բաւարարեն ազգաբնակչութեան կարիքները դաշտերի ոռոգումներով, նոյնը կատարեցին ելեքտրական զօրութեան համար, մեքենայական գործերը առաջ տարին, ամէն կարեւոր մեքենաներով գործարանները զարգացրին և բանւորական կեանքը ճոխացրին, այդպէս էլ բանւորի խարխաւած և խոնջացած մարմինը կազդուրելու միջոցները զարգացնելու համար ոչինչ չի խնայեցին:

Արծնի մէջ հիմնւած բուժարանի բուժիչ աղբերակի ջուրը բաղադրւած է սոյն աղբիւրից, որի վերլուծումը կատարել են յայտնի մասնագէտներ:

ԱՐԾՆԻ ԳԼԽԱՌՈՐ ԱՂԲԵՐԱԿԻ ՋՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԹՈՒՄԸ

ԹԻԻ 1 ԵՒ 2 ՋԵՐՄՈՒԿԻ ՋՐԵՐԸ

Lithyum oxydat	0,90286
Natrium »	4,89887
Kalium »	0,07410
Mangan » ammon	4,62930
Strontium »	0,00200
Barium »	0,00018
Calcium »	0,65000
Mangan »	0,00092
Ferrum »	0,01120
Ammon chloratum oxydatum	5,10930
Ftor	0,00010
Iodum	0,00125
Brum	0,00490
Ammonium Sulfuritum	հետքեր
Phosphore	»
Arsenicum	»
Bor եւն. եւն.	»

Արարատեան դաշտում երեք մեծամեծ լեռներ, հարաւում Մասիսը, հիւսիս արեւելքում Արագածը և արեւելահիւսիսում Ակմանգանը մի մեծ եռանկյան են կազմում, որոնք Նայիրի երկրի սրտի խորշերն են ձեւացնում: Ակմանգան սարի ներքին խորշերում այս աղբիւրով բաղադրւած է Արծնու բուժական գլխաւոր աղբիւրը և անցնելով քսան հազարամեղր տարածութիւն 150-300 մեղր խորութիւնից

բխում է ձորակի ձախ ափում: Չի կարելի ենթադրել թէ Արագածի և Մասիսի ներքին ջրերը ներգործութիւն ունենան Արծնու ջերմութեան ջրերի վրայ, քանի որ Արագածը քառասուն, իսկ Մասիսը 100 հազարամեղր աւելի հեռաւորութիւն ունին Արծնուց: Մանաւանդ որ Արագածի արեւելեան կողմի ջրերը միախառնում են Ապարանի Գաւախ վտակին, իսկ Մասիսի հիւսիսակողմի ջրերը անմիջապէս Երասխին: Ակմանգանի ջրերը Հրազդանին, Գառնիին և մասամբ Սեւանայ լճին են խառնում արտաքուստ և ներքուստ: Արծնու ձորում երեք հազարամեղր դէպ ի հաւաք և այդքան էլ դէպ ի հիւսիս երկու հարիւրից աւելի աղբիւրներ բխում են ձախ կողմից — ներքին և արտաքին կերպով. իսկ աջ կողմի վրայ մինչեւ այսօր նկատուած են չորս աղբիւր, բաց ի պարբերական հեղեղատներից հոսած ջրերը:

Հրազդանի ձախ ափի — Ակմանգանից ձորած ջրերը բոլորն էլ գաղբը ունին, որոնք հաւաքելու համար ներկայիս մի մեծ գործարան է շինւում, որպէս զի այդ գաղբերով Արծնու թիւ 5 և 7 աղբիւրների ջրերը լեցնեն շիշերու մէջ՝ եւ որպէս սեղանի մարսեցնող ջուր վաճառքի դրեն. իսկ աջ ափին այս գաղբը չեն նկատուած: Արդէն հինգ տարի է որ Արծնու ջրերը ծախւում են և տեղում գործարան կայ, որ օրական 4000 սրուակ ջուր է արտահանում. իսկ գաղբի գործարանի աւարտելուց յետոյ պիտի քառապատկի և տասնապատկի: Ներկայիս Հրազդանի ձախ և աջ ափերին մասնագէտները փորձնական հորեր են փորում, մինչեւ 25-30 մեղր խորութեամբ ջրերը ուսումնասիրելու և դրա վրայ հիմնւած եզրակացութիւնների հասնելու:

Թիւ 5 և 7 աղբիւրների ջրերը շատ հաճելի և մարսողական ջրեր են, որոնց մէջ նկատելի է թիւ 1 և 2 աղբիւրների յատկութիւնը, բայց խառնւել են ուրիշ քաղցր ջրերի հետ, չունին գլխաւոր ջրի բաղադրութեան մասնիկներ: Արծն բառն արդէն ցոյց է տալիս, արծնոյ ջրերի

յատկութիւնը, սրա մէջ ինկած մետաղ-
ները, քարերը և խեցիները երեք չորս
օրից ստանում են սպիտակ արծաթի կամ
կարմիր պղնձի գոյն: Նայիրի երկրում
Արծն անունով ջերմուկներ և աղբիւրներ
շատ կան, ոչ միայն Արարատեան դաշ-
տում, այլ և Բարձր-Հայքում, Տուրու-
բերանում, Վասպուրականում, Աղձնի-
քում: Արծնել, նշանակում է մի առար-
կայի վրայ եմայ ամրացնել, էմալով ծած-
կել:

Սումմեր Ակկադները մեր երկիրը ան-
ւանում էին Ակկադ (Բարձունքի Աշխարհ),
քանի որ մեր երկիրը 3-4000 մեղր
նրանցից բարձր է: «Ակ» վանկով բազ-
մաթիւ լեռներ են անւանւում Գետերի
աշխարհում, ինչպէս Ակ-մանգանը, Ակ-
դեւեր, Ակ-բաբա, Ակ-լագան, Ակ-վա-
րան, և այլն: Երեւում է որ քարային
շրջանում, Ակկադների զարգացման դա-
րում Ակ-մանգան սարը որոշ դիրք է ու-
նեցել, բայց անուշադրութեան է մատնւել
Միջին դարերում:

Արծնու ձորում և շրջապատում, ինչ-
պէս երեւում է պեղումներից, մշակոյթը
սկսւել է նախաքարային շրջանում, ինչ-
պէս աչկատարեան ամրոցներով, նոյնպէս
օբսիդիանի գործիքներով: Նախաքա-
րային շրջանում օգտւել են ինչպէս բնա-
կան անձաններից, նոյնպէս յատկապէս
պեղած արհեստական քարայրներից: Քա-
րայրների մուտքի ճակատներին նկատելի
են բնականից իրար սեղմւած այնպիսի
գեղաձեւ թաղարտեայ կամարներ, որոնք
մշակոյթի զարգացման դարերում որպէս
օրինակ ծառայել են վարպետ ճարտարա-
պետներին: Այս անձաններում այնպիսի
գմբէթներ են բնականից կազմուել հինգ
և վեց անկիւնաւոր երկար թաղարտի քա-
րերից, որոնց ձեւերից ճարտարապետները
օգտւել են կամարակապ գմբէթներ կա-
ռուցել ոչ միայն Նայիրի երկրում, այլ
և շրջակայ երկիրներում, մինչեւ Ռէյ,
Եկրատան, Նինուէ և Ուրգուր:

Արծնու կոշորդի, ձախակողմը Հրազ-
դանի բարձրութեան վրայ մի արտում

գտայ օբսիդից շինուած կացին, փետատ,
դանակ, ածելի, սղոց, բերիչ, բերթիչ,
ասեղ, նիզակի և տէգի ծայրեր և բազ-
մաթիւ ջարդուած և մանրած օբսիդի գոր-
ծիքներ: Ենթադրելի է որ այդտեղ եղել
է օբսիդի արհեստանոց, որտեղից խու-
զարկու մասնագէտները բազմաթիւ գոր-
ծիքներ են գտել ու տարել: Երեւում է,
որ Նուրնուս գիւղի շրջապատի օբսիդի
հանքից օգտւել են, ջերմուկի ճանապար-
հին արհեստանոց հիմնել, պատրաստած
գործիքները փոխանակել են ուխտաւոր-
ների բերած պանիրի, իւղի, գառի, իւղի
և պաստառների հետ:

Մշակոյթի զարգացման հետ զարգա-
ցել են և քարայրները: Արծնի գիւղի
տափարակի ափին, ձորի բերանին, հե-
ղեղատի հոսանքի մօտ հիմնել են Չիթ-
ղաց, որ 20 մեղր երկարութիւն, 13 մ.
լայնութիւն և 7 մեղր բարձրութիւն ունի:
Չիթղացի դինգը 2 մեղր տրամագիծ ունի,
60 հարկերով զամեղր թանձրութիւն և այն-
պիսի ողորկւածք, որ կարող է ներկայիս
բարտաշ յղկողների նախանձը զրգոել: Կան
անձաններ, որոնք ներքին երկու- երեք
բաժանումներ ունին, կարող են 2-300
ոչխար տեղաւորել: Այս անձանները Անիի
Ծաղկաձորի 5000 մեծ և փոքր քարայր-
ների կատարելագործման չեն հասել, բայց
զարգացման նախնական շրջանից անցել
են:

Թէ ջերմուկի շրջապատից և թէ շրջա-
կայքից բազմաթիւ խեցեղէն (ceramique)
անօթներ են դուրս եկել, որոնք իրենց
արեւստով ցոյց են տալիս, թէ բրուտի
արեւստը, մանաւանդ կաւի ընտրութիւնը,
թրծումը և ձեւաւորումը ունեցել է իր
զարգացումը, ճաշակը: Սեւ, սպիտակ,
նարնջագոյն, դեղին, գորշ և տորոնի խե-
ցեղէն անօթները պարզ վկայում են, որ
արեւստաւորի միտքը անվերջ գործել է և
զարգացրել նորանոր ձեւեր, նոյնիսկ քան-
դակներ և նկարներ:

Ահա երկրորդ տարին է որ ջերմուկից
երեք հազարամեղր ցած, Հրազդանի երկու-
կողքերին փապուղի են փորել, կապանքներ

հիմնել սրբատաշ քարերով և կրաղիւսով,
որպէս զի Հրազդանից ջուր բարձրացնեն
և ջրանցքով ջուրը հասցնեն ղարը (ան-
ջորդի տափաստանները) ոռոգելու: Այս
ջրերը ոչ միայն պիտի կենդանացնեն
Պողնիսի, Առնշի, Քանաքեռի, Աւանի ղը-
ռերը, պիտի բարձրացնեն բերքի որակն
ու քանակը, այլ ջուրը պիտի հասցնեն
մինչեւ Վաղարշապատի, Փարաքարի հան-
գեքը, առապարները, և տասնեակ հազար
հեկտար ղարը պիտի կենդանանան եւ
հարկը հազարաւոր հողագործների կե-
րակրեն: Ոչ միայն մշակը թանկագին
բերքերի արտադրութեամբ պիտի բար-
ձրացնէ իր հասոյթը, այլ պիտի զարգա-
ցնէ երկրի ճարտարարեւստը:

Մշակոյթը ինչպէս առաջացել է նա-
խապատմական շրջանում, նոյնպէս Միջ-
նադարում Արծնին իր շրջակայքով բազ-
մամարդ է եղել և ետ չէ մնացել ար-

ւեստներով: 1828 թուին Պասկեւիչի հետ
զաղթած Ուրմիի գիւղերից Ասսուրիների
աւանը մեծ քաղաք է եղել, ձոխ և բազ-
մամարդ, որը վկայում են նրա միջի կի-
սականգուն հինգ տաճարները և սրանց
շրջապատի գերեզմանաքարերը իրենց
սքանչելի քանդակներով և հայերէն ար-
ձանագրութիւններով, որոնք հիմնւել են
Ե - Զ դարերում: Իսկ է գարում կանգ է
տուել մշակոյթը և կեանքը քարացել:
Այսօր բանւոր երիտասարդութիւնը մեծ
թափով կերպարանափոխեց քարացած և
ստրկական կեանքը, հիմնարկներ կառուց,
մեքենաներ սարքեց և մշակոյթը շատ
բարձրացրեց, և ակնբախ ամէն տեղ ցոյց
է գալիս, թէ աշխատաւորների կառավա-
րութիւնը սահմանել, շինել և ծրագրել
է հսկայական ընթացք մը Հայաստանի
համար:

ԱՏՐՊԵՏ

1931¹

ԳՐԱԿԱՆ ԲԵՐՓԵՐԸ

Մտքի մշակներու անթոշակ վաստա-
կաւորները կը թուեն: Հեղինակներ պար-
տական, կամաւորաբար լռեցին: Պարսա-
մեան երկու զրազէտ եղբայրներ Կեանք և
Արուստ Տարեգրքի փեթակը մտքի մեղրով
լեցուցին:

Գարամաճեան Սիմոն իր Տարեցոյցը
գործնական և զրական բարեմասնութեամբ
կրկին ճոխացուց: Եւ ուրիշ Տարեցոյցներ
լոյս տեսան, լոյսն անոնց ինծի չհասաւ:

Մանուկ Ճիզմէճեան Պատմաբանը Ա-
մերիկայի Կոնալցոնքեանց իրեւ ճրագ
բազմաբերանեան՝ յեղափոխական սեղա-
նին վրայ հաստատեց:

Կոստան Զարեան ըստ Երգոյն երգոց,
Երեք երգեր երգեց, երգողն ինքն ալ չը-
հասկցաւ ինչ երգեր երգեց:

Մինասեան Խակոհի տիկին, անարգել
լեզուով իր Vivre գրքով ըստ իր տե-
սութեան՝ անթարգմանելի կեանքին գիրքը
թարգմանեց:

Աթէնքի «Նոր Օր»-ը իրեւ զրազիր Խա-
տիսեանը վարձեց՝ անոր գրել տուաւ Հա-
յաստանի Հանրապետութեան ծագումնա-
պատմութիւնը, ամբողջ հատորներն օրա-
գրին վերնատան մէջ ամբարեց, դուռը
ամուր մը աղխեց:

Յովհ. Աւագեանին կարգացի Այսպէս
ապրեցաւը, և համոզուեցայ որ մենք հա-
յերս ոչ զիւցազի, այլ եղբերգութեան
լալկան կեանքը այսպէս այնպէս ապրե-
ցանք:

Աւետիս Ահարոնեան Խմ գիրքը գրեց,
ինքը կարդալու համար. և անով ինքնին
շատագուր եղաւ իր անհերքելի մեծու-
թեան:

Նախառակ Գրագետներու Բարեկամներ
մահուան երկիւղէն անմահներն ապրեցը-
նելու համար, լոյս տուին լուսաւոր եր-